ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի մարտիության շնորհավորանքը

Գեղեցիկ ավանդույթ է դարձել յուրաքանչյուր տարի՝ Մարտի 8-ին, մեր մեծ կոլեկտիվի կանանց, օրիորդներին, ինչպես նաև ուսանողուհիներին իմ կողմից ջերմ շնորհավորանքներ ուղղելը:

Տնտեսագիտական համալսարանի սիրելի աշխատակցուհիներ, ուսանողուհիներ, գարնանային այս գեղեցիկ օրվա՝ Կանանց միջազգային տոնի առթիվ, մաղթում եմ ձեզ անձնական երջանկություն, ընտանեկան բարօրություն և բոլոր նվիրական երազանքների իրականացում: Հատկապես այս տարվա շատ սպասված գարունը թող ձեզ պարուրի ջերմությամբ, ավելի նորոգի ձեր հավատն ապագայի հանդեպ, մղի դրական քայլերի, որոնք կամրացնեն ձեր օջախները, կամրապնդեն ձեր աշխատանքային և մասնագիտական նպատակները՝ ի շահ ձեզ, ձեր ընտանիքների և մեր երկրի:

Հպարտանում եմ, մեր աշխատակցուհիների աշխատանքային ձեռքբերումներով, որոնք տարբեր ստորաբաժանումներում՝ վարչական, ուսումնական, թե այլ, հանդես են բերում բարեխիղճ մարդուն վայել աշխատառճ՝ իրենց նպաստը բերելով համալսարանի զարգացման մեր ընդհանուր գործին: Նույնը պետք է ասեմ նաև մեր ուսանողուհիների մասին, որոնց հաջողությունները ևս մեզ հպարտանալու շատ առիթներ են պարգևում:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ, ցանկանում բարձր տրամադրություն:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Կորյուն Աթոյան